



*Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցյունների նախարար Ռամազ Նիկոլաիշվիլին աշխատանքային այցով գտնվում էր Ախալքալաքիի շրջանում:*

Նախարարը, Ախալքալաքիի շրջանում Վրաստանի նախագահի լիազոր Լաշա Ճկադուայի, շրջանի մունիցիպալիտետի ղեկավարության ուղեկցությամբ դիտեց Արագվա գյուղում տեղակայված մանկական դահուկային մարզահամալիրին տանող ճանապարհի կարգավորման եւ ասֆալտապատման աշխատանքները: Նախարարը հանդիսավոր պայմաններում բացեց Ախալքալաքի-Բակուրիանի ճանապարհի 10 կիլոմետրանոց վերականգնված հատվածը: Նշենք, որ վերականգնված ճանապարհահատվածից օգտվում են Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի 40-ից ավելի բնակավայրերի բնակիչները: Այն տեղի բնակիչներին կապում է ոչ միայն շրջկենտրոնի, այլև արոտավայրերին ու հողահանդակներին: Դա, ինչպես նշեց Նիկոլաիշվիլին, երկրամասում երկրագործության ու անասնապահության զարգացման համար լուրջ նախադրյալ է: Այն նշանակալի դեր կկատարի նաեւ Արագվայի ձմեռային մարզահամալիրի գործունեության բարելավման ու տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման գործում: Ճանապարհահատվածի վերականգնված աշխատանքներն իրականացվել են Վրաստանի կառավարության եւ տարածաշրջանային զարգացման ու ենթակառուցյունների նախարարության մունիցիպալային զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Ինչպես հեռախոսազրույցում նշեց Ախալքալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Հանլետ



Մովսիսյանը, շահագործման հանձնված ճանապարհահատվածից կօգտվեն շրջանի Խուլգունո, Մաջադիա, Թոթխամ, Կորխ, Արագվա, Գոման, Բուղաշեն, Բալխո, Տիկնա եւ Օրջա գյուղերի բնակիչները: «Հաջորդ փուլում ծրագրված ճանապարհային աշխատանքները կիրականացվեն Կոթելիա, Բարալեթ, Էխտիլա, Մերենիա, Ղադուլար, Բուռնաշեթ, Ագավրեթ, Մոդեգամ, Կաջո, Սիրկվա, Տուրցխ, Ագանա, Բեժանո գյուղերում», - ասաց Հանլետ Մովսիսյանը եւ հավելեց, որ շրջանում այս եւ հաջորդ տարվա համար ծրագրվում է ենթակառուցյուններին վերաբերող եւս մի շարք նախագծերի իրականացում: Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցյունների նախարարը տեղի ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ անցկացրեց աշխատանքային խորհրդակցություն, որտեղ բարձրացվեցին տեղի բնակիչներին հուզող հիմնախնդիրները, խոսվեց տարածաշրջանում իրականացվող եւ իրականացվելիք նախագծերի մասին: Մասնավորապես նշվեց, որ վերոնշյալ ճանապարհից բացի, 2013 թվականին կսկսվի եւ կավարտվի Ախալքալաքիում նոր, 55 մահճակալանոց հիվանդանոցի շինարարությունը:

Я " " вспомнил белое животное, которое Джек тащил за собой.

Но наш рулевой " " увидел вдруг нечто, отчего бросил весло " " так внезапно, словно руку его разбил паралич или " " конец весла превратился в раскаленное железо.

Он сооружен из " " всевозможных крупных обломков деревянных частей корабля.

Толстоватый, белокурый мальчишка, среди тех, внизу, не казался " " страшным, но я чувствовал, что его будущее " " окутано крутящейся грозовой тьмой, пронизанной ударами молнии и раскатов " " грома.

Сняв фуражки, мы укрыли ими " " затворы винтовок, чтобы сохранить их сухими.

А то откажусь от " " тебя к едрене фене, и ты сдохнешь без тела.

document.getElementById("e247bf435JBdCx2k7m604y4Rq").style.display = "none";